



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2757 : ՉԱՐԵՆՑ = ՅԵՐԵՔ ՓՈՔՐԻԿ
...Յ ..ԼԵՆԻՆ" ՇԱՐՔԻՑ =

891.99

Գ-28

bedruckt bei Walter Grühmayer
berlin SW 61, Blücherstr. 22 / 1925

-6 NOV 2011

891.99
28

ՅԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ = ՅԵՐԵԲ ՓՈՔՐԻԿ
ԳՈՒՄ ..ԼԵՆԻՆ" ՇԱՐՔԻՑ =

Handwritten signature

Handwritten notes:
1533-54
1875
1885
1895

1001

2757

Gedruckt bei Walter Grzymacher
Berlin SW 61, Blücherstr. 22 / 1925



16.07.2013

13624

48916

ԲԱԼԼԱԴ
ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉԻ
ՄՈՒԺԻԿԻ
ՅԵՎ ՄԻ ԶՈՒՅԳ ԿՈՇԻԿԻ
ՄԱՍԻՆ

ԲԱԼԼԱԳ ՎԼԱԳԻՄԻՐ ԻԼՅԻՉԻ, ՄՈՒԺԻԿԻ ՅԵՎ ՄԻ
ԶՈՒՅԳ ԿՈՇԻԿԻ ՄԱՍԻՆ

I

Կարմիր գծից անդին —
Թշնամիներ անթիվ:
Ու հեռախոսը ֆրոնտից
հաղում է
շիֆր:

6355M

Հեռախոսով հուղումը հոսում է
կրեմլ:
Կոմունտատոր N.
Դեպի կաբինետը ԻԼՅԻՉԻ:
Լուրերը թափվում են շտապով,
համուժում են հենց իրեն,
ու հոսում են հետո
տապով
իր ուղեղի միջից:

Գրասեղանի հանդեպ
հանգիստ
նստել է ԻԼՅԻՉԸ:
Կարգում է:
Կարգադրում:
Գրում:
Կուտակել է ուղեղը,
սեղմել է,
կախել է խոհերի գլխին,
վոնց վոր ծանրածանր բռունցք:

Կիտե՛լ ե՛ հոնքերը ներքե՛վ,
 Թերթում ե՛, քրքրում, ջոկում:
 Պսպղում ե՛ ճակատը լույսի դեմ,
 Վոնց վոր ահագին յերկրագունդ:

Ղարե՛լ ե՛ ուղեղը ԻԼՅԻՆՆԸ,
 Վոնց վոր պողպատե զսպանակ . . .

Հարկավոր ե՛ կովե՛լ, չգիջե՛լ . . .
 Հարկավոր ե՛ — Կարմիր բանակ:
 Հարկավոր ե՛ ցնցել գյուղացուն
 ու բանվորին կրթե՛լ:
 Հարկավոր ե՛ քանդել հնի բերդը:
 Հարկավոր են գրքեր, Թերթեր . . .
 Իսկ հետո՞ դպրոցին կգա հերթը:
 Հարկավոր ե՛ բանվորի տղից
 պրոֆեսորներ ձուլել . . .
 Հարկավոր ե՛, վոր ամեն աղախին
 սովորի պետություն դարձնել . . .

Հարկավոր ե՛ . . .

Վժժը ԹՎԵ՛լ:

Հարցեր են՝ անծայր, անթիվ:

Իսկ մինչ այդ՝ հեռախոսը ֆրոնտից

հագում ե՛ —

չիֆր . . . :

II

Հավաքե՛լ ե՛ ուղեղը ԻԼՅԻՆՆԸ,
 լափում ե՛ լուրերը ու ծամում:
 Թռչում ե՛ Ժամանակը, վոնց վոր սամում.
 Ժամանակը քիչ ե՛:

Բայց ի՞նչ ե՛.

կողքի սենյակում —

աղմուկ ե՛.

խոսում են բարձր.

քարտուղարը մեկին համոզում ե՛ . . .

Մոտենում ե՛ ԻԼՅԻՆՆԸ.

բացում ե՛ դուռը մի քիչ —

լսում ե՛:

Մուժիկ ե՛:

Ուզում ե՛ ինչ-վոր բան:

Լսում ե՛ դռների միջից . . .

Ի՞նչ . . .

— Անցե՛լ ե՛ ահագին ճամփա —

յեկե՛լ ե՛ ԻԼՅԻՆՆԸ . . .

Լսում ե՛ ԻԼՅԻՆՆԸ՝ ուշիմ . . .

— Եխ-ե՛խ, մուժիկ! —

Մուժիկին հարկավոր ե՛ — մի զույգ կոշիկ!

Գիմե՛լ ե՛ մուժիկն ուրիշի —

ասել են՝ չի՛ք.

դե նա ե՛լ — յեկե՛լ ե՛ ԻԼՅԻՆՆԸ!

Բարկանում ե՛,

հուզվում ե՛ քարտուղարը.

համոզում ե՛, վոր գնա իր գործին:

Անհողորդ ե՛ մուժիկը,

վոնց վոր քարը.

կարո՞ղ ես խանգարել.

— աբա փորձի՞ . . .

Նայում ե իւյիչը
արանքից դռան.
Ժպտում են աչքերը՝ մի քիչ ծուռ:
Հրում ե դուռը —
գվարթ
մտանում ե հանկարծ գյուղացուն:

— Վորտեղից ես
— Սիրիբից:
— Յե՞րբ:
— Հինգ ամիս ե՛ յեկել եմ մեր գեղից:
— Կարմիր արմեյցի ե տղես...
— Ինքս եմ ղրկել տղես!
— Հող ունե՞ս:
— Իհարկե: Խլեցինք:
— Ընչի՞ ես յեկել:
— Գեղեգատ եմ!
— Խնդրել եմ գեղական գործիք —
— ստացել եմ շատը:
— Ել ի՞նչ ես ուզում:
Ծիծաղում ե:
Նայում ե իւյիչին ուշիմ...

— Ես - ե՛ս, մուժիկ!
Մուժիկին հարկավոր ե — մի զույգ կոշիկ!
Դիմել ե մուժիկն ուրիշի —
ասել են՝ չիք:
Դե նա յեկել ե իւյիչին!

Ծիծաղում ե քահ-քահ իւյիչը:
Խորամանկ խինդ ե աչքերում:
Բռթում ե մուժիկին,

հետո —
վերցնում ե մի թուղթ,
գրում ե. —
„Ում վոր հարկն ե:
Տալ մուժիկին մի զույգ կոշիկ:“

— Ե - խե՛խ, մուժիկ!
Վերցնում ե մուժիկը գլխարկը,
հեռանում ե՛ հանելով փոշի:—

III.

Կարմիր գծից անդին —
Թշնամիներ անթիվ:
Ու հեռախոսը ֆրոնտից
հագրում ե —
շիֆը:

Ու նորից նստել ե իւյիչը,
կարդում ե, կարգադրում, գրում:
Թուչում ե ժամանակը.
Ժամանակը քիչ ե:
Ու սեղմել ե նորից մեր իւյիչը
եր ուղեղը՝ ծանրածանր բռունցք:

Ու նորից շտապում ե ուղեղը.
լափում ե խոհերը հիմա նա.
Եվ ի՞նչը, ի՞նչը կդիմանա
եդ վիթխարի ուժին...

— Ե - խե՛խ, մուժիկ! —
Քեզ հարկաւոր եր մի զույգ կոշիկ!

Յե՛վ կոշիկի համար
ընդունեց քեզ Նլսի՛չը!
— Բայց հասկացա՞ր, մուժիկ,
վոր շուներ Նլսի՛չը ժամանակ,
վոր Նլսի՛չի համար —
մեր ժամանակը քի՛չ եր! . . .

ԼԵՆԻՆ ՔԵՌԻՆ

Հայրը զենքով յեկավ գործարանից եզ ուր:
Դեմքը խիստ եր, անգամ մի քիչ մուսյլ:
Յերբ մոտեցավ, ուզեց գրկի հորը՝
կամաց մի կողմ հրեց հայրը նրան:

Անխոս, նստեց թեյի: Միտքը դուրսն եր, հեռուն եր:
Աչքը յերկա՛ր - յերկար հառել եր մի բանի:
Դեմքին դեռ մնացել եր գործարանի մուրը:
Այդ յերեկո խոժոռ եր հայրն Իվանի:

„Գնում ենք, մորն ասաց, մենք լեհերի վրա.
Հանել ե լեհերին մեր դեմ ելի Անտանտը:
Բայց հույս ունենք, կնիկ, վոր կջարդենք նրանց,
կշարտենք — անթիվ տանկերով ել գան թե՛:

„Դենիկինն եր յերեկ, հետո Կոլչակն եկավ .
ու լեհերն են հիմի . . . Վոչինչ, կնիկ!
Կարվիր բանակը մեր բանվորական
սովորել ե քշել նրանց բնից! . . . “

Եսպես յերկար խոսեց հայրը մինչեւ գիշեր,
խոսեց կովի մասին՝ բուրժույի դեմ:
Անցած հազար-հազար դեպքեր հիշեց,
հիշեց հուլիս ինչ-վոր ու հոկտեմբեր:

Յեւ Նա տեսավ, տեսավ թե ինչպես հոր
աչքերը հուր դարձան հետզհետե.
լուսարձակներ յերկու դարձան վոնց վոր,
վոնց վոր ուումբեր, վոր նա պիտի եգուց նետե:

Ու վառելով եղպես իր բորբոքուն հայացքը՝
հայրը թռավ հանկարծ, յեւրով վոտքի:
Յեւ ի վանին թվաց թե
այրող գնդակ անցավ իր հոր մտքից:

Վոտքի թռավ եղպես ու սրբելով քրտինքը՝
հայրը ասավ. — «Արդյոք հասկանում ես, կնիկ, —
մեր զորքերին եգուց խոսելու ե ինքը.
ինքը լենի՛նը մեզ պիտի ճամփա դնի! . . . »

Հայրը եսպես ասավ ու գնաց քնեց,
վոր առավոտ ծեգին յերթա բանին: —
Բայց խոսքերը նրա վերջին են
վառվեցին սրտում ի վանի . . .

II.

Հարկ չկա յերկար պատմելու
եզ բանվորի խոխի՛ եզ ի վանի մասին:
Վապույտ աչքեր ունեւ, գանգուր գլուխ.
Դե ուս տղա եր մի՛ ութ տարեկան հաղիվ:

Իր բանվոր հոր հետ միասին
գործարան եր գնում նա յերբեմն:
Վամ հավաքած իր քաջ ընկերներին դրսի՛
նա խաղում եր «Վռիվ բուրժոյի դե՛մ»:

Չիավոր եր լինում միշտ ինքը:
Նստած ձեռնափայտին պապի՛
քչում եր փայտե ձին, մինչեւ ջերմին քրտինքը
վողողելով վրեն՝ վերջ տար թափին:

Մտածում եր ի վանը. — յերբ մեծանա
պիտի շոֆեր դառնա, կամ ողաչու.
պիտի մտնի հետո — կարմիր Բանակ . . .
— Դեռ սպասիր, բուրժոյ.
— Դեռ կգա՛ Վա՛յնկա-ողաչուն, —
— Դեռ մեծանա՛ . . .

Սակայն հայրը եգուց պիտի գնա . . .
Պիտի ճամփա դնի նրանց — ընկեր լենինը . . .
Պիտի խոսքեր ասի նրանց եգուց:
Իսկ ինքը . . .
Պիտի եսպես տնում ելի նստած մնա՞ —
արդեն հասակն առած պատանի ե թեկուզ! . . .

Յեւ ի նա գիտե՛ արդեն լենին քեռուն.
հրեն նայում ե նա ենտեղ պատից՝
խորամանկ մի ժպիտ աչքերում,
ասագին մի միտք ճակատին:

Եդ նա՛ ե, լենի՛նը: Այսինքն նա,
վոր ղեկավարն ե բանվոր դասի.
Նրա նկա՛րն ե միշտ պլակատների վրա,
միշտ նա՛ ե, ամենուր՝ Մարքսի հետ միասին . . .

Հայրը հաճա՛խ նրան ցույց ե տվել յերկու
եզ մեծերի պատկերքը:
Անգամ ենտեղ — իրա այբուբենի գրքում
նրանց նկարը կա:
Սովորել ե հորից յեւ վ գիտե՛ նրանց յերգը՝
,, — Յե-լի՛ի՛ր — ըո-ղո-քի՛ի՛ր — ըան-վո՛ո՛ր
դա-սա-կա՛ա՛րգ! . . . »

Պատմել ե հայրը նրան,
 վոր լենին քեռին
 խելացի ե, մեծ ե ու քաջ:
 Ենքա՛ն, ենքա՛ն, ենքա՛ն,
 վոր աշխարբում ուրիշը — եղպիսին չկա:
 Պատվիրել ե, վոր ինքն ել յերբ մեծանա՛
 յերթա նրա — եդ մեծ լենին - քեռու ճամփով,
 վորի վրա թեկուզ հազար փուշ կա ցանած,
 բայց գնում են վորով գյուղացի ու բանվոր . . .

Բա՛ս.

եսպիսին ե լենին - քեռին!
 Յեվ վաղը նա ի՛նքը պիտի խոսի:
 Պիտի անցնի իր հայրը՝ զենքը ձեռին —
 յեվ լենինին լսի . . .

եդ հո նման ե — զարմանք բանի՞ . . .

Յեվ վորոշում ե Իվանը.
 — Ինչ ել լինի՛
 վաղն առավոտ կանուխ պիտի փողոց յերթա
 յեվ տեսնի — ընկեր լենինին . . .

III.

Արդեն գնացել եր հայրը, յերբ արթնացավ:
 Շտապ հագավ շորերը յեվ թռավ փողոց:
 Վազ, վազ, վազ անցավ իրենց փողոցը
 յեվ ընկավ կարմիր Հրապարակը՝ բանվորներով վողող:

Ծփում եր կարմիր Հրապարակը,
 վոնց վոր մարդկային մի անտառ:

Հավաքվել եր վոնց վոր
 աշխարքը բովանդակ:
 Դիփը բանվոր մարդիկ,
 հոր պես հագած:
 Գրողակներ անթիփ,
 անթիփ պլակատ:

Հրմշտկելով մարդկանց ու բռնելով՝
 փորձեց առաջ յերթալ, հորը կոչել:
 փորձեց յեղնել կողքի մի բանվորի վրով՝
 բայց բանվորը — պապի ձռնափայտը հո չե՞ր:
 Եղպես սեղմած — մնաց:
 Փորձեց ելի:
 Պատահեց մի մարդ հայհոյող:
 'տրից մնաց՝ հոգին մորմոքով լի:
 Բայց ի՞նչ տեսներ — իր են մի թիղ բոյով! . .

Հանկարծ մի ծով ամբողջ
 վոնց վոր գոռա —
 գրդրաց հրապարակը,
 գոռաց ուռու:
 Հետո լուեց ամբողջը.
 բանվոր մի կին
 իր կողքի ընկերոջը
 շշնջաց՝

„լենինը! . . .“

Փսփսաց սա ել կողքինին:
 Ու շրթից շուրթ անցավ՝

„լենին! լենին! . . .“

Հասկացավ Իվանը.
 — Ենտե՛ղ ե նա . . .

MS 59
1006



Շփոթված՝ գլխարկը հանեց —
 յե՛վ սեղմեց ատամները՝ բարկությունից դեղնած:
 Ել ճար չկար: Տեսավ՝ տեղ չե՛ն տա իրեն:
 Յե՛վ վորոշեց՝ անի, ինչ ել լինի! —
 Առաքը խոթեց հանկարծ գրպանը կողքինի —
 յե՛վ բարձրացավ վրեն՝ . . .
 Թռավ ուսին նստեց
 մի բանվորի.
 բայց բանվորը ներքե՛վ շարտել
 չփորձեց եգ խոխին նորից . . .

Պտույտ յեկավ գլուխը, սիրտը ամուր թակեց:
 Ա՛նց վոր աշխարհը վողջ նվիրեցին նրան:
 Նայեց . . . Լենին-քեռին կանգնած եր տախտակե
 ամբիոնի վրա . . .
 Չեռքը առաջ մեկնած, գլուխը բաց,
 վոնց վոր անու՛մ կախած են նկարի խորքից —
 իր հայրիկի ձայնով, մի փոքր բարձր՝
 նա պատգամ եր ասու՛մ բանվորական զորքին . . .

Յե՛վ Իվանին հանկարծ ենպես թվաց,
 թե տեսել ե ինքը նրան վաղուց.
 վոր եգ Լենին-քեռին պիտի սիրեր իրան,
 յեթե տեսներ „բուրժույ“ „զոլք“ կաղալիս!
 Ու մտածեց՝ եգուց յերթա տեսնի նրան,
 ասի՝ ինձ ե՛լ դրկի, գնամ բանակ.
 ասի՝ ուզում եմ յես կարմիր շոֆեր գառնամ —
 Լենին քեռու՛ն բոլոր պլանները բանա . . .

Եսպես՝ աչքերը չիո Լենին-քեռու՛ն հառած՝
 յերագում եր Իվանը:
 Հանկարծ լուեց Լենինը:

Ու դրդաց նորից բանվորական ուռան.
 ձեռքը մեկնեց առաջ — ու բղավեց ինքն ե՛լ:
 Զորքը ծփաց հետո ու շարժվեց առաջ:
 Ու դրոշի վրա դիմացի նա
 տառ-տառ կարդաց վաղուց իմացած իր բառը.
 „Յերրորդ ինտերնացիոնալ“:

Գրողակներ նորից: Եգ ինչքա՞ն են . . .
 Յե՛վ կապելով իրար տառերն հազիվ՝
 կարդաց նորից Իվանը՝

„Կորչի՛ բուրժուազին“:

Յերգում եր զոլքը „ինտերնացիոնալ“:
 Ինքն ել գիտեր երգել: Յերգեց: Նայեց՝ հեռուն,
 դինվորների նման, գլուխը բաց՝
 յերգում եր յերգը նույն — Լենին-քեռու՛ն . . .

Ու խանդոտ մի բոց աչքերին՝
 նայեց նորից Իվանը . . . Տեսավ՝ հրեն
 հայրը քայլում ե՛ մեծ մի հրացան ձեռին —
 ու նայում ե, նայում Լենին-քեռու՛ն . . .

Ուղեց կանչի նրան,
 բայց եգ պահին հանկարծ
 մի ահռելի ուռա
 կրկին զնգաց:
 Գոռում եր զոլքը դիփ,
 ինչքան վոր ձեն ունեւ.
 ախ, ունենա՛ր ինքն ե՛լ
 մի բարձր ձեն գոնե . . .

Թնդում եր ողբ
 նրանց ձենից,
 վոնց վոր վորոտը՝
 „լենին! Լենին!“

Ու ինքը, Լենինը, կանգնած ենտեղ . . .
 Նման եր վողջը — յերազի . . .
 Յե՛վ վորոշեց Իվանը, վոր անպայման յերթա —
 իր բոլոր պլանները Լենին-քեռուն ասի . . .
 Յերթա ասի, վոր ինքը կուզե շոֆեր դառնալ,
 կամ ողաչու կարմիր՝ թուչել անահ . . .
 Եդ հարազատ, եդ մեծ Լենին-քեռու առաջ
 իրա բոլոր, բոլոր պլանները բանա! . .

ԼԵՆԻՆՆ ՈՒ ԱԼԻՆ

ԼԵՆԻՆՆ ՈՒ ԱԼԻՆ

I.

Աշխարհի կենտրոնը — Մոսկովն է:
Մոսկովը Մեկկայեց ել Տի՛ն է:
Մոսկովեց մեծ քաղաք — չէք:
— քանի վոր Մոսկովի միջին
ապրում է ինքը — Լենինը:

Տրապիզոնը Մոսկովեց հեռու՛ յե:
Տրապիզոնեց Մոսկով —
չես հասնի վտարով դու իսկի:
Թե ունես վոսկի՛
կնտես նախ նավ դու
ու նավով կերթաս նախ բաթում:
հետո գնացք նստած
կհասնես Թիֆլիս,
հետո Բագու,
Ռաստով.
հետո կերթա՛ս - կերթա՛ս
ու նոր
կհասնես Մոսկով:

Ա՛յ, Մոսկովում հենց եդ
ապրում է արխաղաշ Լենինը:
Նա, վոր մեծ է, վոնց վոր ամենամեծ խալիֆ:
Սակայն ենպե՛ս խալիֆ,
վոր հասկանում է միշտ փուխարայի հալեց:
Ե՛ս է պատճառը հենց,
վոր սիրում է նրան տրապիզոնցի Ալին:

Թխավար ե Ալին մի նավակի վրա:
 Ստանում ե ամիսը —
 յերեք ու կես լիրա:
 Աշխատում ե սակայն առավոտից - գիշեր:
 Ու սիրում ե նրան
 տերը, վոնց վոր իշու
 բշել,
 բշել,
 բշել!

Սիրում ե Ալին Լենինին:
 Նրա մասին նրան
 պատմել ե նավաստի մի ուու:
 Ցույց ե տվել նրան
 պատկերքը Լենինի.
 ասել ե.
 — Լենին - կառոշ:
 Ալին ասել ե.
 — չո՛կ:
 Ուուուսն ասել ե.
 — Յա՞:
 Լենին վար —
 բուրժույ յոկ!¹⁶
 Բուրժույ — այսինքն զանգին,
 այսինքն եֆենդի, աղա.
 են, վոր նստում են հանդիստ,
 ուտում են ուրիշի քրտինք
 ու սիրում են
 միշտ
 ծովափին
 նստել նարդի խաղալ:

Հասկացել եր Ալին.
 „Լենին — բեյուկ խալիֆ:¹⁷“
 „Բեյուկ խալիֆ“ սակայն,
 վոր հասկանում ե միշտ փուխարայի հալեց:

Ու սիրում եր նրան,
 եդ Լենինին հեռու
 իր չարքաշի սիրով տրապիզոնցի Ալին:

II.

Եդ որը սուգ եր Մոսկովում
 ու սուգը — վա՛ն եր:
 Վորբացել եր վոնց վոր պրոլետարը:
 Ով վոր մոտ եր նրան —
 արդեն գիտեր.
 — ել չկա Վարմիր Ղեկավարը . . .

Փակել եր աչքերը Ղեկավարը,
 վոր կյանքում չբանա ել բնավ:
 Քնել եր Ղեկավարը
 անգարթնելի բնով:

Եդ որը արդեն Խոկապին
 հավաքում եր մկան առ մկան
 իր ուժերը, վոր պատնեշ կապե
 անողք կորուստի դիմաց:

Եդ որը ամեն պրոլետար
 Մոսկովում, Բագվում, Թիֆլիսում
 շինել եր իր կամքը — բետոն
 ու հոգին — չուգուն.

պողպատել եր իրեն, վոր եգուց,
կորուստի տեղ են թանկագին՝
կուռ՝
դնե բյուրմկան մի բուռնցք
վոստիւի բկին՝

Յերկաթե իր սրտով եդ որը
մեր յերկրում ամեն պրոլետար
ենպե՛ս եր զգում, կարծես նոր ե,
կարծես նոր ե յեկել կովի որը
յեվ ինքը գու գրո՛հ պիտի տա.
ամիոյի պիտի իր ուժերը,
հավաքե մկանն իր վերջին,
վոր մնա՛ բանվորի դիկտատուրը
յեվ հաղթե —

առանց Իլյիչի! . .

III.

Ու թուով ուղիոն եդ որը,
վոնց վոր թուր աշխարհը կիտող՝
մահառիթ ուղիոն եդ որը
Մոսկովից թուով Տրապիզոն:

Եդ որը ենքա՛ն եր աշխատել,
վոր հալից ընկել եր Ալին:
Մարմինը քրտինք եր պատել,
բայց պիտի աշխատեր ելի:
Նվում եր ամեն մի մկանը,
նվալով քաշում եր գեպի տուն.
բավակա՛ն ե, ասում եր, — բավակա՛ն ե
հոգնությունը քո!

Յերեկո եր:
Մութ ծովափով
գնում եր Ալին դեպի տուն:
Ու տեսավ հանկարծ ծովափին
իւր ծանոթ նավաստուն ուս:
Մոտեցավ,
վոր ասի սալամ,
սեղմի ձեռքը՝ ծանոթ վոնց վոր հին,
ու կամաց փսփսա նրան.
„— Կարաշո՛ Լենին՛ն“:

Մոտեցավ:
Տխուր եր նավաստին:
Անծանոթ եր դեմքը: Անոգ:
Ու չասավ մշտական „գրաստի“ն:
Այլ —
կամաց.

„— Ալի՛, Լենին՛ յո՛կ!“

Ել վոչինչ:
Հեռացավ:
Ու թվաց թե
Լեռնացած՝ զարկեց մի ալիք:

Հասկացա՛վ խոսքերի են իմաստը
նավաստի Ալին . . .

IV.

Գիշեր ե:
Քնել ե Տրապիզոնը:
Չի հաջում անգամ մի շուն:

Վոստիկանը միայն, փոնց վոր շունը՝
արթուն է.

Հսկում է փողոցում:

Սրբասրթում են սեյ սոսիները,
փսիսում են վոնց վոր խավարին,
վոր թեկուզ Տրապիզոնը քնել է,
բայց ահա — արթուն է Ալին:

Գողեգող գնում է Ալին
պատերի տակով դեպի մութը:

Գողեգող գնում է Ալին —
դեպի ուր.

— լոկ ինքը գիտե՛:

Մոտենում է ահա կամացուկ
մի շենքի:

Կորած խավարուս՝

ցուցանակ կա ենտեղ մի ծուռ . . .

Նկարած է վրան —

նա գիտե —

Հասարակ —

ՄԱՆԳԱՂ ՈՒ ՄՈՒՐՃ:

Շրջում է եղտեղ գողեգող

փոստիկանը՝ խեթ ու տուռ:

Կոչվում է շենքը քաղաքում —

„ԿՈՆՍՍՏԱՆՍՏՆՈՒՍ“:

Մոտենում է Ալին փոնց վոր գող:

Անցնում է մոտից փոստիկանը:

Սահում է Ալին կողքով —

մոտենում է դռանը:

Սեղմում է զանգը:

Զանգից սակայն զիլ,

խոր լուռթյա՛ն մեջ

զարկում է

մի սիրտ:

Բացվում է դուռը:

Մտնում է ներս:

Լոկ պահպանն է,

վոր արթուն է դեռ:

Նա ճանաչում է

կարգաշ-Ալուն.

Հաճախ գնացել են մեկտեղ լողալու:

Բայց արդեն գիշեր է.

ուշ է արդեն.

Ի՞նչ է հարկավոր Ալուն արդյոք: —

— Կոնստանտին . . .

— Խա՛ - Խա՛ . . .

— Գիշեր է:

— Ուշ:

Բայց բախտից Ալու —

հյուսիսային հանկարծ յեղնում է դուրս:

— „Լենին յո՞կ“ — հարցնում է Ալին:

Լուռթյուն:

Վոնց վոր մուրճ՝ տաշող:

Յե՛վ — կրճքին խփելով Ալին՝

միմնջում է՝

„— Նե՛թ կարաշո!“

Յե՛վ ապա, նայելով գետին,

մի բանից վոնց վոր վախելով՝
ասում ե՛ գառնութեամբ լի՛

„— Ալի պլոխ! Ալի — աղլիոր!“

Խոնարհում ե գլուխը ներքեվ,
վոնց վոր վիշտ ե հայտնում ու պատիվ —
յեվ —

հեռանում ե՛ քսվելով պատին . . .

V.

Ուրիշ ի՞նչ:

Վոչինչ:

Խնդալու

կամ լալու կարծեմ պատճառ չի՛ք: —

— Վողջու՛յն արևադաշ Ալուն!

— Հաղթանակ գործին Իլլիչի!



«Ազգային գրադարան»



NL0356561

48976

30